| N | ԹԵՐԹԵՐԻ ԱՆՎԱՆՈՒՄ | ՄԱԿՆԻՇ |
|---|---|---|
| | ԺԱՄԱՆԱԿԱՑՈՒՅՑ | Ժ-1 |
| 1 | ԳԼԽԱԹԵՐԹ | Ճ-1 |
| 2 | ՏԱՆԻՔԻ ՓԱՅՏՅԱ ԷԼԵՄԵՆՏՆԵՐԻ ՄԱՍՆԱԳԻՐ,<br>ՀԱՏԱԿՆԵՐԻ ԵՎ ՀԱՐԴԱՐՄԱՆ ԱՇԽԱՏԱՆՔՆԵՐԻ ՄԱՍՆԱԳԻՐ | Ճ-2 |
| 3 | ԴՌՆԵՐԻ ԵՎ ՊԱՏՈՒՀԱՆՆԵՐԻ ՄԱՍՆԱԳԻՐ | Ճ-3 |
| 4 | ԴՌՆԵՐԻ ԵՎ ՊԱՏՈՒՀԱՆՆԵՐԻ ՄԱՍՆԱԳԻՐ /ՇԱՐՈՒՆԱԿՈՒԹՅՈՒՆ/ | Ճ-4 |
| 5 | ԳԼԽԱՎՈՐ ՀԱՏԱԿԱԳԻԾ, ՉԱՓԱՆՇՈՒՄ | Ճ-5 |
| 6 | ՈՒՂՂԱՁԻԳ ՀԱՏԱԿԱԳԾՈՒՄ | Ճ-6 |
| 7 | ՀՈՂԱՅԻՆ ԱՇԽԱՏԱՆՔՆԵՐԻ ՀԱՇՎԵԿՇԻՌ | Ճ-7 |
| 8 | ՀԱՏՈՒՅԹՆԵՐ | Ճ-8 |
| 9 | ՀԱՆԳՈՒՅՑՆԵՐ | Ճ-9 |
| 10 | ՊԱՐԻՍՊՆԵՐԻ ՓՌՎԱԾՔՆԵՐ ԵՎ ՀԱՆԳՈՒՅՑՆԵՐ | Ճ-10 |
| 11 | ՊԱՐՍՊԻ ՓՌՎԱԾՔ ԵՎ ՀԱՆԳՈՒՅՑՆԵՐ | Ճ-11 |
| 12 | ՊԱՐՍՊԻ ՀԱՆԳՈՒՅՑՆԵՐ | Ճ-12 |
| 13 | ՊԱՐՍՊԻ ՀԱՆԳՈՒՅՑՆԵՐ | Ճ-13 |
| 14 | ԴԱՐՊԱՍ ԵՎ ՀԱՆԳՈՒՅՑՆԵՐ | Ճ-14 |
| 15 | ԱՌԱՋԻՆ ՀԱՐԿԻ ՀԱՏԱԿԱԳԻԾ /ՉԱՓԱԳՐՈՒԹՅՈՒՆ/ | Ճ-15 |
| 16 | ԵՐԿՐՈՐԴ ՀԱՐԿԻ ՀԱՏԱԿԱԳԻԾ /ՉԱՓԱԳՐՈՒԹՅՈՒՆ/ | Ճ-16 |
| 17 | ԿՏՐՎԱԾՔ 1-1, ԿՏՐՎԱԾՔ 2-2 /ՉԱՓԱԳՐՈՒԹՅՈՒՆ/ | Ճ-17 |
| 18 | ՃԱԿԱՏ ԸՍՏ 1-6 ԱՌԱՆՑՔՆԵՐԻ /ՉԱՓԱԳՐՈՒԹՅՈՒՆ/ | Ճ-18 |
| 19 | ՃԱԿԱՏ ԸՍՏ 6-1 ԱՌԱՆՑՔՆԵՐԻ /ՉԱՓԱԳՐՈՒԹՅՈՒՆ/ | Ճ-19 |
| 20 | ՃԱԿԱՏ ԸՍՏ Ա-Ջ ԱՌԱՆՑՔՆԵՐԻ /ՉԱՓԱԳՐՈՒԹՅՈՒՆ/ | Ճ-20 |
| 21 | ՃԱԿԱՏ ԸՍՏ Ջ-Ա ԱՌԱՆՑՔՆԵՐԻ /ՉԱՓԱԳՐՈՒԹՅՈՒՆ/ | Ճ-21 |
| 22 | ՃԱԿԱՏՆԵՐ ԸՍՏ Ա-Գ, Գ-Ա ԱՌԱՆՑՔՆԵՐԻ /ՉԱՓԱԳՐՈՒԹՅՈՒՆ/ | Ճ-22 |
| 23 | ՃԱԿԱՏՆԵՐ ԸՍՏ 4-6, 6-4 ԱՌԱՆՑՔՆԵՐԻ /ՉԱՓԱԳՐՈՒԹՅՈՒՆ/ | Ճ-23 |
| 24 | ԱՌԱՋԻՆ ՀԱՐԿԻ ՀԱՏԱԿԱԳԻԾ | Ճ-24 |
| 25 | ԵՐԿՐՈՐԴ ՀԱՐԿԻ ՀԱՏԱԿԱԳԻԾ | Ճ-25 |
| 26 | ԱՌԱՋԻՆ ՀԱՐԿԻ ԲԱՑՎԱԾՔՆԵՐԻ ՓՈՓՈԽՄԱՆ ՀԱՏԱԿԱԳԻԾ | Ճ-26 |
| 27 | ԵՐԿՐՈՐԴ ՀԱՐԿԻ ԲԱՑՎԱԾՔՆԵՐԻ ՓՈՓՈԽՄԱՆ ՀԱՏԱԿԱԳԻԾ | Ճ-27 |
| 28 | ՏԱՆԻՔԻ ՀԱՏԱԿԱԳԻԾ | Ճ-28 |
| 29 | ՏԱՆԻՔԻ ՋՐԱՀԵՌԱՑՄԱՆ ՀԱՏԱԿԱԳԻԾ | Ճ-29 |
| 30 | ԿՏՐՎԱԾՔ 1-1 | Ճ-30 |
| 31 | ԿՏՐՎԱԾՔ 2-2 | Ճ-31 |
| 32 | ԿՏՐՎԱԾՔ 3-3, 4-4, ՀԱՆԳՈՒՅՑ 1 | Ճ-32 |
| 33 | ԿՏՐՎԱԾՔ 5-5, 6-6, ՊԱՏ N1, ՊԱՏ N2, ՀԱՆԳՈՒՅՑ 1 | Ճ-33 |
| 34 | ՄՈՒՏՔԻ ՀՈՎԱՐՆԵՐԻ ՀԱՏԱԿԱԳԻԾ, Մ/Կ ՄԱՍՆԱԳԻՐ,<br>ՀԱՏՈՒՅԹ 1, ՀԱՏՈՒՅԹ 2, ՀԱՆԳՈՒՅՑ 1, | Ճ-34 |
| 35 | ՀԱՆԳՈՒՅՑՆԵՐ 1, 2, 3, 4, 5 | Ճ-35 |
| 36 | ՃԱԿԱՏ ԸՍՏ 1-6 ԱՌԱՆՑՔՆԵՐԻ | Ճ-36 |
| 37 | ՃԱԿԱՏ ԸՍՏ 6-1 ԱՌԱՆՑՔՆԵՐԻ, ՀԱՏՈՒՅԹ 1 | Ճ-37 |
| 38 | ՃԱԿԱՏ ԸՍՏ Ա-Ջ ԱՌԱՆՑՔՆԵՐԻ, ՀԱՐԹԱԿԻ ՀԱՆԳՈՒՅՑ | Ճ-38 |
| 39 | ՃԱԿԱՏ ԸՍՏ Ջ-Ա ԱՌԱՆՑՔՆԵՐԻ, ՎԵՐԱԿԱՆԳՎՈՂ ՊԱՏԵՐԻ ՀԱՆԳՈՒՅՑ | Ճ-39 |
| 40 | ՃԱԿԱՏ, ԱԼՅՈՒԿՈԲՈՆԴԻ ՀԱՆԳՈՒՅՑՆԵՐԻ ՀԱՄԱՐԱԿԱԼՈՒՄ | Ճ-40 |
| 41 | ԱԼՅՈՒԿՈԲՈՆԴԻ ՀԱՆԳՈՒՅՑՆԵՐ | Ճ-41 |
| 42 | ԱԼՅՈՒԿՈԲՈՆԴԻ ՖՐՈՆՏՈՆ ԵՎ ՀԱՆԳՈՒՅՑՆԵՐ | Ճ-42 |

# ԲԱՑԱՏՐԱԳԻՐ

Արմավիրի մարզի Արշալույս համայնքի մանկապարտեզի վերակառուցման նախագիծի համար հիմք է հանդիսացել`

ա. ՀՀ տարածքային զարգացման հիմնադրամի N TPD -03 պայմանագիրը

բ. Սեփականության վկայականը N 25122012-04-0363

գ. Ճարտարապետական առաջադրանքը

դ. Տեխնիկական պայմանները

Հատկացված տարածքը կազմում է 0.4 հա և գտնվում է համայնքի կենտրոնական մասում: Մանկապարտեզը իրենից ներկայացնում է կիսակառույց շինություն` բաղկացած երեք մասնաշենքերից. 1-ինը երկհարկանի տանիքով, 2-րդը երկհարկանի առանց տանիքի և 3-րդը մեկ հարկանի` մասամբ անավարտ պատերով և առանց տանիքի:

Ըստ նախագծի առաջադրանքի նախատեսվում է տաք անցումով կապել կիսակառույցները և վերահատակգծել 100 տեղանոց մանկապարտեզի նորմաներին համապատասխան:

Յուրաքանչյուր հարկում նախատեսված են երկու 25 հոգանոց խմբեր` բաղկացած համապատասխան նորմատիվ սենյակներից. այն է` խաղասենյակ, ննջարան,խոհանոց և սանհանգույց:

Մեկ հարկանի մասնաշենքում նախագծված է հանդիսությունների դահլիճը, վարչական բաժինը, բուժկետը և խոհանոցային արտադրամասը:

Հակահրդեհային նորմատիվներից ելնելով` երկհարկանի մասնաշենքերի երկրորդ հարկից նախատեսված են աստիճանավանդակներ:

Նախատեսվում է քանդել գոյություն ունեցող քարի միջնորմները, բացել նոր բացվածքներ, լայնացնել և փակել գոյություն ունեցող բացվածքները:

Արտաքին պատերի ուժեղացումը կատարվում է տորկրետ սվաղով` շուրջերիզելով պատուհանների բացվածքները:

Արտաքին պատերի վերականգնումը իրականացվում է տուֆե կանոնավոր քարերից` երեսապատված գոյություն ունեցող քարե շարվածքին համապատասխան սալիկներով: Միջնորմները իրականացվում են սնամեջ բետոնյա բլոկներից 100մմ և 200մմ հաստության: Գլխավոր մուտքի արտաքին դուռը իրականացնել ալյումինե ջերմակամրջով պրոֆիլից: Ներքին դռները իրականացնել ՄԴՖ -ից: Բոլոր պատուհանները մետաղապլաստե են: Կիրառվող հատակների տեսակներն են` պրեսգրանիտե սալիկներ, խեցասալիկներ և պոլիվինիլքլորիդե հատակ:

Արտաքին մուտքերի վրա տեղադրված են մետաղական հովարներ` ծածկված դասական ոճի մետաղական կղմինդրով: Երկհարկանի մասնաշենքերի տանիքները լանջավոր են : Ծածկույթը իրականցվում է ցինկապատ պրոֆիլավոր թիթեղով:

Բարեկարգման նախագծի մեջ ներառված են չորս խաղային հրապարակներ, հանգստի տաղավարներ:Մայթերը և սալվածքները իրականացվում են ձևավոր բետոնյա սալիկներից: Երթևեկելի մասը ասֆալտապատվում է, իսկ մնացած ազատ տարածքները կանաչապատվում են:

Մանկապարտեզի հատկացված հողատարածքի մի մասը պարսպատված է: Մյուս հատվածների համար նախատեսված են մետաղական ցանցապատ պարիսպ, իսկ կենտրոնական մասում` քարե պարիսպ ձևավոր ճաղավանդակով:

| | | | | | |
|---|---|---|---|---|---|
| Ն.Գ.Ճ. | Հ.ՀԱՐՈՒԹՅՈՒՆՅԱՆ | | ՕԲ.ԱՆՎԱՆՈՒՄԸ<br>ԱՐՇԱԼՈՒՅՍ ՀԱՄԱՅՆՔԻ ՄԱՆԿԱՊԱՐՏԵԶԻ ՎԵՐԱԿԱՌՈՒՑՄԱՆ ՆԱԽԱԳԻԾ | design | |
| ՆԱԽԱԳԾԵՑ | Գ.ԱՂԱՄՅԱՆ | | | «ԱՍՔՄԵԴ դիզայն» ՍՊԸ | |
| | | | ԹԵՐԹԻ ԱՆՎԱՆՈՒՄԸ<br>ԳԼԽԱԹԵՐԹ | ՕԲՅԵԿՏ | 02/15 |
| | | | | ԹԵՐԹ | Ճ-1 ՓՈՒԼ ԱԳ |
| ՊԱՏՎԻՐԱՏՈՒ՝ | | | | ԹԵՐԹԵՐ | 42 |